



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

**ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

<< 20 >> << Դեկտեմբեր >> 2019թ.

N 117/220 - 2019

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 13-ի թիվ N751-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2019 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ ՍՄ/ ԳԳ-2-2/18930-2019/ գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանում խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց ընտրության և խնամատարության պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու նպատակով.

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել մասնագիտական աշխատանքայի խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավարին (Ա.Ապիտոնյանին)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքների արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Մարզպետ՝



Հ. Մաթևոսյան

Հավելված  
Հայաստանի Հանրապետության Արմավիրի  
մարզպետ 2019թվականի դեկտեմբերի 22-ի  
0237/2-37-16 կարգադրության

Աշխատանքային խումբ

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Ա. Ապիտոնյան

«Արմավիրի մարզպետարանի ընտանիքի,  
կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի պետ

Անդամներ՝

Գեղամ Իսկանդարյան

«Արմավիրի մարզպետարանի ընտանիքի,  
կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի  
գլխավոր մասնագետ

Գայանե Հարությունյան

«Արմավիրի մարզպետարանի ընտանիքի  
կանանց և երեխաների իրավունքների  
պաշտպանության բաժնի  
առաջատար մասնագետ

Յողիկ Սարգսյան

«Արմավիրի մարզպետարանի առողջապահության և  
սոցիալական ապահովության վարչության  
գլխավոր մասնագետ

Լիլիթ Մարտիրոսյան

Արմավիրի սոցիալական աջակցության  
տարածքային գործակալության  
կրտսեր մասնագետ

Գլխավոր քարտուղարի  
պաշտոնակատար՝



Վ. Վարդապարյան